ՀՀ Արմավիրի մարզի Ջրաշենի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Ջրաշենի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Առաջատար մասնագետ ծածկագիր (3.1-1)

Աշխատակազմի առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը:
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի կազմումը և ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսագիտական գործի կազմակերպմանը:
Քարտուղարի հանձնարարությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան մարմիններ ներկայացնելու համար կազմում է ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-Առնվազն միջին մասնագիտական կրթություն

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014 թվականի ապրիլի 30 -ին, ժամը12:00-ին Ջրաշենի գյուղապետարանի շենքում:

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ‘բ’ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճեները ՝բնօրինակի հետ միասին
- հայտարարություն այն մասին,որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընգրկված հիվանդություններից որևէ մեկով:

Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ, կամ սահմանափակ գործունակ:

- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճեները,
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներին ներկայացված փաստաթղթերի պատճեները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից ՝ Ջրաշենի գյուղապետարանում (հեռ. (098) 98-05-06) և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն (հասցե Աբովյան 71, հեռ (0237) 2-76-49, (0237) 2-07-70),

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2014 թ. Ապրիլի 15-ը: